«ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-058-14.03.2019-ՏՏԳԲ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ օրենք) սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Համաձայն օրենքի 1-ին հոդվածի 5-րդ և 16-րդ պարբերությունների՝ օրենքի կարգավորման առարկան կենդանիների վայրի տեսակների ու դրանց համակեցությունների ամբողջականությունն է:

Օրենքի 15-րդ և 19-րդ հոդվածների կարգավորումները վերաբերում են կենդանական աշխարհի վայրի տեսակներին, մինչդեռ նախագծին կից հիմնավորման մեջ խոսքը «բնակավայրերում կենդանիների, մասնավորապես, թափառող շների ոչնչացման» դեպքերի մասին է: Ինչ վերաբերում է օրենքի 15-րդ հոդվածով սահմանված՝ բացառիկ դեպքերում (բնակչության, վայրի և ընտանի կենդանիների համաճարակային հիվանդություններ, անասնապահության զարգացմանը վտանգի սպառնում, էկոլոգիական հավասարակշռության խախտման վտանգ) վայրի կենդանիների առանձին տեսակների քանակը կարգավորող միջոցառումների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ անցկացմանը, ապա որպես օրինակ կարող է ծառայել ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գայլերի թվաքանակի կարգավորման և միջոցառումների իրականացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 123-Ն որոշումը, որի հավելվածով նախատեսված են նաև հրազենով ոչնչացման դեպքեր: Բացի այդ, օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված է կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործումը սոցիալական նպատակներով (սիրողական որս և ձկնորսություն, ձկնորսության և որսի օբյեկտ չհանդիսացող կենդանիների որս), իսկ «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ որսի ընթացքում կարող են օգտագործվել օրենքով սահմանված կարգով որսորդական ողորկափող և ակոսավոր հրազեն, որսորդական սառը զենք:

Նախագծի 2-րդ հոդվածով օրենքի 19-րդ հոդվածում առաջարկվող լրացման կապակցությամբ հարկ է նկատի ունենալ, որ նույն հոդվածի «դ» ենթակետով արգելվում է կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքը և խոշտանգումը, ինչն էլ իր հերթին են-

թաղրում է արգելք այդ գործողությունների հնարավոր բոլոր ձևերի կիրառման նկատմամբ:

Բացի այդ, կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքի և խոշտանգման, զանգվածային ոչնչացումների և այլ իրավախախտումների վերաբերյալ սահմանված են պատասխանատվության համապատասխան միջոցներ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (մասնավորապես՝ 92-րդ հոդված) և ՀՀ քրեական օրենսգրքի (մասնավորապես՝ 295-րդ հոդված) մի շարք հոդվածներով:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ նախագծով առաջարկվող հարաբերությունները գործող օրենքի կարգավորման առարկա չեն, և առաջարկում ենք գործող օրենքի փոփոխվող հոդվածները թողնել անփոփոխ: